

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-111-Ն -41

2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ ԲԴԽ-23-Ն-1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով չսահմանված Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները սահմանելու, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-23-Ն-1 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Որոշման 1-ին հավելվածի 3-րդ աղյուսակի 5-րդ կետի «Մասնագիտացում» սյունակի «Քրեական» բառից հետո լրացնել «/անչափահասների վարույթներ/»բառերը,

2) Որոշման 1-ին հավելվածի 3-րդ աղյուսակի 34-րդ կետի «Մասնագիտացում» սյունակի «Քրեական» բառից հետո լրացնել «/համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ վարույթներ/»բառերը,

3) Որոշման 1-ին հավելվածի 5-րդ աղյուսակի «(Քրեական մասնագիտացում)» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«

6.	քաղաք	Կոտայքի մարզի	Վարոսյան Արմեն	Քրեական

	Չարենցավան	վարչական տարածք	Աշոտի	

»,

4) Որոշման 1-ին հավելվածի 5-րդ աղյուսակի □Ընդհանուրը՝ □տողի «12»թիվը փոխարինել «13»թվով,

5) Որոշման 1-ին հավելվածի 9-րդ աղյուսակի «(Քրեական մասնագիտացում)» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«

6.				

»,

6) Որոշման 1-ին հավելվածի 9-րդ աղյուսակի □Ընդհանուրը՝ □տողի «13»թիվը փոխարինել «14»թվով,

7) Որոշման 1-ին հավելվածի 10-րդ աղյուսակի «(Քրեական մասնագիտացում)» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«

7.	քաղաք Ստեփանավան	Լոռու մարզի վարչական տարածք	Սուղյան Վարդան Ձաուրի	Քրեական

□,

8) Որոշման 1-ին հավելվածի 10-րդ աղյուսակի □Ընդհանուրը՝ □տողի «13»թիվը փոխարինել «14»թվով,

9) Որոշման 1-ին հավելվածի 13-րդ աղյուսակի «(Քրեական մասնագիտացում)» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«

6.				

»,

10) Որոշման 1-ին հավելվածի 13-րդ աղյուսակի □Ընդհանուրը՝ □ տողի «10» թիվը փոխարինել «11» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Կ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

2024թ.նոյեմբերի 26
ք.Երևան